ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Արմեն Ղուլարյանի՝ 2018 թվականի նոյեմբերի 12-15 Ուկրաինայի Կիև քաղաքում կայացած Էներգիայի կայուն զարգացման իններորդ միջազգային ֆորումին և նախարարական կոմիտեին մասնակցելու նպատակով գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Արմեն Ղուլարյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետը՝ Կիև (Ուկրաինա), 2018 թվականի նոյեմբերի 12-15-ը

4.Հրավիրող կողմը՝ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Ֆորումն իր շուրջ էր համախմբել էներգետիկայի, քաղաքաշինության և արդյունաբերության ոլորտների միջազգային փորձագետներին, պետական պաշտոնյաներին, գործարար համայնքի, ֆինանսական հատվածի, ակադեմիական և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝ նպատակ ունենալով համատեղ ջանքերը միավորելու կայուն էներգիայի համակարգերի մշակման գործում:

Միջոցառման նպատակն էր էներգետիկ և քաղաքաշինական ոլորտի քաղաքականություն մշակողների և փորձագետների համար ստեղծել հատուկ հարթակ՝ նոր ծրագրեր ներկայացնելու և գաղափարներ քննարկելու համար:

6. Քննարկված թեմաները՝

Քննարկված թեմաներից առավել արդյունավետ և բովանդակալից բնույթ կրեցին հետևյալ թեմաները՝

1. Շենքերի և շինությունների էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում:
2. Էներգետիկ անցում և դեկարբոնիզացում:

3. Որոնք են ապագա էներգետիկ համակարգերի վերաբերյալ տարածաշրջանային և կառուցվածքային փոփոխությունների օրինակները: Արդյունաբերական անցումների համար ինչ բիզնես մոդելներ կարող են կրկնօրինակվել:
4. Ինչպես կարող է մարդկային գործոնն ամրապնդվել:
5. Առողջ/ամուր համակարգեր և ենթակառուցվածքներ:

7.Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

Հանդիպումներ տեղի ունեցան Ֆորումի կազմակերպիչների (ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով) և ոլորտի պատասխանատուների հետ (Ուկրաինայի կառավարության ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ), ՄԱԿ-ի Վերապատրաստման և հետազոտությունների ինստիտուտ (UNITAR), ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր, Համաշխարհային բանկ, Միջազգային էներգետիկ գործակալություն (IEA), Վերականգնվող էներգիայի միջազգային գործակալություն (IRENA)), ինչպես նաև այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում քննարկում ծավալվեց հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչու էներգետիկ անվտանգությանն անցումը կենսական նշանակություն ունի կայուն զարգացման համար:
- Որ նորարարական և հեռանկարային ռազմավարությունները կարող են խթան հանդիսանալ էներգետիկ անվտանգության անցման համար:
- Ինչ է անհրաժեշտ էներգաարդյունավետության հուսալի համակարգեր ստեղծելու համար:
- Աշխարհը պատրաստ է թվային էներգիային:

10. Գործուղվող - Արմեն Ղուլարյան

11. Սպորագրությունը, ամսաթիվը – ***19.11.2018 թվական***